ML MINING

ՄԼ ՄԱՅՆԻՆԳ ՍՊԸ
21/3 Ն.Ադոնց փող, Երևան, ՀՀ

ML MINING LLC
21/3 N.Adonts str, Yerevan, RA

09 փետրվար 2026թ. N 42

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

Մեր ընկերությունը Աշտարակի հրաբխային խարամի հանքավայրի Կոն-2 տեղամասի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 26.06.2018թ.-ի N29/584 ընդերքօգտագործման թույլտվության:

Հանքավայրի շահագործման բնապահպանական կառավարման պլանին համաձայն աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող անօրգանական փոշու արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ դրանց պահպանման համար նախատեսված տեղից դեպի հավաքող փոսը ուղղությամբ:

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում Աշտարակի հրաբխային խարամի հանքավայրի Կոն-2 տեղամասի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ

գլխավոր տնօրեն՝ Է. Մարգարյան

(+374) 10 200 004 mlmining.am mlmining@mail.ru

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Մշտադիտարկումների օբյեկտը | Մշտադիտարկումների վայրը | Միջին ցուցանիշը | Մշտադիտար-կումների տեսակը | Հաճախականությունը | Միջինացված արդյունքը[1] |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Մթնոլորտային օդ | Հանքավայրի տարածք | Անօրգանական փոշի ($SiO_2$ 20-70% ) | Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն | Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ | 0.084մգ/մ$^3$ |
| Մակերևութային ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Ստորգետնյա ջրեր | Նախատեսված չէ | | | | |
| Հողային ծածկույթ | Արտադրական հրապարակի տարածք | Նավթամթերք-ներ | Տարածքի դիտարկում | 2025 թվականի ընթացքում մեկ անգամ | Նավթամթեքների արտահոսքերի հետքեր չեն հայտնաբերվել |
| Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ | Նախատեսված չէ | | | | |
| Աղմուկ և թրթռում | Նախատեսված չէ | | | | |
| Ոչ վտանգավոր թափոններ | Նախատեսված չէ | | | | |

[1]Հավատարմագրված լաբորատորիայի կողմից փոշու մոնիթորինգի իրականացման խնդիրների հետ կապված, մոնիթորինգի արդյունքը նշվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից փոշու ֆոնային կոնցենտրացիաների վերաբերյալ ժամանակավոր առաջարկությունների /https://meteomonitoring.am/web/render/text/sub_breadcrumb_id/20/air/concentration/

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| Վառելանյութերի պահեստարաններ | Հանքավայրի տարածքում վառելանյութի պահեստարաններ չկան | | | | |
| Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապ-ված ենթակառուց-վածքներ | Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան | | | | |
| Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ | Բոլոր սարքավորումներն անցել են տարեկան տեխնիկական ստուգում | | | | |